ԻՎԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
IVETA HAKOBYAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

Վերջին հիսուն-վաթսուն տարիներին համաշխարհային քաղաքական հետազոտություններում առանձնակի ուշադրության են արժանանում ինտեգրման գործընթացները, որոնք որոշակի ընդհատումներով և փոխակերպումներով արտացոլվում են տարածաշրջանային և համաշխարհային գրեթե բոլոր քաղաքական ու տնտեսական պրոցեսներում: Չնայած այս տարիներին առաջարկվել ու ստեղծվել են տնտեսական ու քաղաքական ինտեգրման զանազան մոդելներ, բայցևայնպես, վերջին երկու տասնամյակում քաղաքագիտական գրականության մեջ և գործնական քաղաքականության շրջանակներում, որպես առավել հաջողությունների հասած մոդել, դիտարկվում է Եվրոպական Միության ինտեգրումը: Հենց այս հանգամանքով է բացատրվում այն մասնագետների ձգտումը, ովքեր ինտեգրման մոդելներ մշակելիս, տեղայնացնում են եվրոպական փորձը տարբեր տարածաշրջաններում՝ հաշվի չառնելով, որ այն ստեղծվել է պատմա-քաղաքական այլ իրողության պայմաններում:

Հետաքրքիր է, որ Խորհրդային Միության փլուզումից և ԽՍՀՄ երկրների անկախացումից հետո հետխորհրդային տարածաշրջանում սկսեցին ստեղծվել ինտեգրման մի շարք կառույցներ, որոնք նպատակ ունեին նոր սկզբունքներով, նոր մոտեցումներով վերաինտեգրել հետխորհրդային երկրները նոր քաղաքական-տնտեսական միություններում տարածաշրջանում առկա հիմնախնդիրները լուծելու համար: Դրանցում կիրառվում էին եվրոպական կառույցների գործունեությունն ապահովող մի շարք մեխանիզմներ ու սկզբունքներ, որոնք հետխորհրդային իրականության մեջ արդյունավետ չէին, քանի որ դրանց ներդրումը զուտ մեխանիկական բնույթ էր կրում: Այսպիսով, կարող ենք ասել, որ տարածաշրջանում ստեղծված ինտեգրացիոն կառույցները, ըստ էության, գոյություն ունեն միայն փաստաթղթերի տեսքով:

Գուցե դա էր պատճառը, որ հետխորհրդային երկրներից շատերը, այդ թվում նաև Հայաստանը, որպես զարգացման ամենահեռանկարային տարբերակ ընտրեցին եվրոպական կառույցներին ինտեգրվելու ճանա-

պարհը: Բայց այս տարբերակն էլ բավականին դժվար ու բարդ ուղի նախանշեց մեր պետության համար:

Հայաստանի եվրաինտեգրման հիմնախնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ և՛ մասնագիտական գրականության մեջ, և՛ շատ քաղաքական գործիչների կողմից պատշաճ չի ուսումնասիրվում այս քաղաքականության նպատակահարմարության, ազգային կենսակերպին համապատասխանության խնդիրները: Այդ է պատճառը, որ մեր հոդվածում հիմնականում անդրադառնում ենք Հայաստանի եվրոինտեգրման քաղաքականության նպատակահարմարության և արդյունավետության հիմնախնդրին, ինչպես նաև տարածաշրջանային ինտեգրման այլընտրանքային մոտեցումների հնարավորությանը:

Հիմնական գործընթացները քննարկելուց առաջ, հարկ ենք համարում անդրադառնալ մի խնդրի, որը միանշանակ չի ընկալվում ու օգտագործվում և՛ քաղաքական գործիչների, և՛ քաղաքագետների կողմից: Այն վերաբերում է "եվրոպական ինտեգրում" հասկացության ընկալմանը: Շատերը, "եվրոպական ինտեգրում" ասելով, հասկանում են Եվրոպական Միությանն ինտեգրվելը, և այս գործընթացը սկսում են Եվրոպական Միության Հարևանության Քաղաքականության հետ (ԵՀՔ): Սակայն Հայաստանի՝ Եվրոպային ինտեգրվելու պրոցեսը սկսվել է ավելի վաղ, բայց պաշտոնապես կարելի է նշել Եվրոպայի Խորհրդին անդամակցելու պահից ի վեր (2001 թ. հունվարի 28-ին):

Եվրոպական ինտեգրումը գործընթաց է: Այն միայն եվրոպական կառույցներին անդամակցել չի նշանակում, այլ առաջին հերթին նախատեսում է եվրոպական արժեքային և քաղաքակրթական համակարգի ընդունում և տեղայնացում: Հայ հասարակության շրջանում կարելի է հանդիպել այս գործընթացի վերաբերյալ երկու ծայրահեղ մոտեցումներ՝ անհանդուրժողական և եվրոպամետ: Առաջին դեպքում վերաբերմունքը պայմանավորված է ազգային արժեքները, մենթալիտետը, ուրույն "դեմքը" կորցնելու վախի հետ: Իսկ երկրորդ տեսակետի կողմնակիցները եվրահինտեգրման մեջ են տեսնում Հայաստանի ապագան, տնտեսական և սոցիալական բարեկեցությունը:

Հայաստանի եվրահինտեգրման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել երկու փուլի: Առաջին փուլ կարելի է համարել Եվրոպայի Խորհրդին անդամակցությունը և դրան հաջորդած մի քանի տարիները: Երկրորդ փուլը հիմնականում սկսվում է ԵՄ-ի ընդլայնումից հետո՝ 2004 թվականին, երբ առաջացած աշխարհաքաղաքական իրողությունները ստիպեցին Եվրամիությանը նոր քաղաքականություն մշակել աշխարհագրորեն ԵՄ սահմանակից դարձած հետխորհրդային երկրների նկատ-

մամբ: Դա Եվրոպական Հարևանության Քաղաքականությունն էր, որը մեծ խանդավառությամբ ընդունվեց Հարավային Կովկասի երկրների կողմից: Մինչ այդ ծրագրի ստեղծումը Հայաստանը ԵՄ-ի հետ համագործակցում էր "Գործընկերության և համագործակցության" համաձայնագրի շրջանակներում, որի նպատակներն էին քաղաքական կապերի զարգացման միջոցով կողմերի միջև քաղաքական երկխոսության ապահովումը ժողովրդավարությունն ամրապնդելու, կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար[1]: Արդեն ԵՀՔ շրջանակներում ստեղծվեց մի ծրագիր, որում առավել կոնկրետ ձևակերպվեցին առկա խնդիրները և դրանք լուծելու հնարավոր մեխանիզմները: Գործողությունների ծրագիրը (ինչպես սկսեցին կոչել այն) իր մեջ ներառեց արտաքին և անվտանգության հիմնախնդիրներ (օրինակ՝ ահաբեկչությունը և դրա խորքային պատճառները. զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը և զենքի ապօրինի արտահանումը և այլն), հակամարտությունների կանխարգելում և ճգնաժամերի կառավարում:

Եվրոպական Հարևանության Քաղաքականության հիմնական նպատակը ԵՄ հարևան տարածաշրջանում անվտանգության և կայունության հաստատումն է, ինչն իր հերթին թույլ կտա խուսափել նոր բաժանիչ գծերի առաջացումից: Այս հիմնական նպատակին են ծառայում Գործողությունների ծրագրում հնչեցրած բոլոր այն հիմնախնդիրները, որոնք առավել կարևոր են Հայաստանի և ԵՄ-ի համար: Մեր երկրի համար մշակված ծրագրում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել հետևյալ ոլորտներին:

1. Ժողովրդավարական կառույցների, օրենքի իշխանության ամրապնդում, ներառյալ դատաիրավական համակարգի բարեփոխում և կոռուպցիայի դեմ պայքար:
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգում՝ Հայաստանի միջազգային պարտավորություններին համապատասխան:
3. Տնտեսական զարգացում, աղքատության նվազեցմանն ուղղված մշակված քաղաքականություն, սոցիալական քաղաքականության ներդաշնակեցում, շրջակա միջավայրի պահպանում:
4. Ներդրումային ոլորտի բարելավում:
5. Տնտեսության ոլորտում օրենսդրության և վարչարարության համապատասխանեցում:
6. Էներգետիկ ոլորտի զարգացում:
7. Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն աջակցում:
8. Տարածաշրջանային համագործակցության բնագավառում ջանքերի ավելացում և ներդաշնակեցում:

Դատելով Գործողությունների ծրագրի իրականացման մեղմ ասած համեստ ցուցանիշներից՝ ցավոք, պետք է նշել, որ մեր երկիրը դեռևս չունի ինտեգրման խնդիրների լուծման համազգային ռազմավարություն: Գործողությունների ծրագրի առկայությունը դեռ չի փաստում դրա ստեղծման մասին, քանի որ այն չի ներառում իրական մեխանիզմներ և չի նախանշում վերը նշված առաջնային խնդիրները լուծելու ուղիներ: Եվ ամենակարևորը՝ ինտեգրման գործընթացն այսօր Հայաստանում դարձել է կարճաժամկետ քաղաքական շահարկումների առարկա և հոչակագրային հասկացության տեսքով կիրառվում է որպես քաղաքական պայքարի գործիք:

Անդրադառնալով հոդվածի սկզբում նախանշած խնդրին՝ այն է Հայաստանի համար եվրաինտեգրման նպատակահարմարությանն ու արդյունավետությանը՝ հարկ է նշել, որ եվրոպական կառույցների չափանիշներին Հայաստանի հասարակական-քաղաքական համակարգի համապատասխանեցման գործընթացը հանդիսանում է յուրօրինակ խթան սոցիալ-քաղաքական ու տնտեսական բարեփոխումների համար: Այս տեսանկյունից տվյալ գործընթացը դրական դեր ունի մեր հասարակության զարգացման համար, քանի որ պետական բարեփոխումների գործընթացը պետք է ունենա քաղաքական ու տնտեսական զարգացման կոնկրետ ուղենիշներ: Ներկա փուլում դրանք "եվրաինտեգրման պայմաններն են կամ, այսպես կոչված, չափորոշիչները": Սակայն պետք չէ նոր տնտեսական և սոցիալ-քաղաքական փոփոխությունները կապակցել բացառապես "եվրոպական ընտրության" հետ: Դրանք մեր հասարակության զարգացման օբյեկտիվ պատմական գործընթացի բաղկացուցիչներ են, պետք է հստակ գիտակցել դա, կատարել որոշակի եզրակացություններ և եվրոպական ինտեգրման ընձեռած բոլոր հնարավորություններն օգտագործել սեփական պետության շահերի իրագործման համար:

Ինչ վերաբերում է եվրոպական ինտեգրման այլընտրանքային մոդելների հնարավորության հիմնախնդրին, ապա պետք է նշել, որ վերջին տարիներին և հատկապես 2011 թվականից ի վեր Ռուսաստանում և հետխորհրդային որոշ երկրներում (Ղազախստան, Բելառուս) սկսվեց ակտիվ շրջանառվել տարածաշրջանային ինտեգրման Եվրասիական մոդելի ստեղծման գաղափարը: Չնայած որ այն նոր չէ և՛ քաղաքագիտական, և՛ քաղաքական շրջանակների համար, այնուամենայնիվ առաջին անգամ պետական մակարդակով Ռուսաստանի նախկին վարչապետ Վ. Պուտինը հետխորհրդային երկրերը Եվրասիական Միության կազմում միավորելու գաղափարը հնչեցեցրեց որպես ծրագիր ու տարածաշրջանի հնարավոր ապագա[3]: Ըստ էության, այս ծրագիրը նախատեսում է ԱՊՀ միության փոխարինումը Եվրասիական միությամբ, որն իրենից կներկայացնի

"հավասար" երկրների միություն և համագործակցություն՝ կառուցված քաղաքատնտեսական արժեքային նոր համակարգով:

Հետխորհրդային տարածաշրջանում ինտեգրման մոդելներ առաջարկելիս կամ քննարկելիս հարկ է անդրադառնալ մի շարք խնդիրների, որոնք հետևսգայում դառնում են այդ գաղափարների իրականացմանը խանգարող կամ էլ աջակցող հանգամանքներ: Դրանցից են, օրինակ, հետևյալ հարցերը. ի՞նչ նոր հեռանկարներ կարող է տալ ինտեգրման այս մոդելը տարածաշրջանային երկրների համար, արդյո՞ք գոյություն ունեն ընդհանուր տարածաշրջանային շահեր, որոնք հիմք կհանդիսանան ինտեգրման համար, հնարավո՞ր է արդյոք տարածաշրջանային ինտեգրումն ապահովել էթնոքաղաքական կոնֆլիկտների լուծմանը զուգընթաց, կարո՞ղ են արդյոք տնտեսական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող պետությունները միավորվել և կայուն զարգացում ապահովել: Այս հարցերն այսօր ծառացած են հետխորհրդային երկրների առաջ, սակայն դրանց լուծման համար նախադրյալներն ու ռեսուրսները գրեթե բացակայում են: Հենց վերը նշված խնդիրներով են պայմանավորված տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման առկա կառույցների անարդյունավետությունը և անկարողությունը:

Հետխորհրդային երկրները տնտեսական ու քաղաքական զարգացման առումով միատարր չեն: Զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով նրանց միջև եղած տնտեսա-քաղաքական, մշակութային համագործակցությունը տարբեր մակարդակներում է գտնվում: Արտաքին քաղաքական հարցերում պետությունների դրսևորած կողմնորոշումները նույնպես տարբեր են:

Եվրասիական Միության գաղափարը տարածաշրջանային ինտեգրման և համագործակցության օպտիմալ միության ստեղծման անհնարինության պայմաններում տարբեր արձագանքներ է ստանում: Ինչպես պնդում են միության ջատագովները, համագործակցության և ինտեգրման հիմք այստեղ կարող է դառնալ մրցունակ տնտեսության ստեղծումն ու կայուն տնտեսական աճի ապահովումը: Մասնակից երկրների ցանկության դեպքում տնտեսական ինտեգրումը հետագայում կարող է հիմք հանդիսանալ նաև քաղաքական ինտեգրման համար:

Ինտեգրման "եվրասիական մոդելը" հավակնում է մրցակցել ժամանակակից աշխարհի տնտեսական ու քաղաքական այլ ուժային կենտրոնների հետ: Չնայած միության գաղափարախոսներն ու կողմնակիցները հավաստում են, թե եվրասիական ինտեգրման գաղափարը չի մրցակցելու տարածաշրջանում արդեն ընթացող եվրոպական ինտեգրման գործընթացի հետ և կառուցվելու է եվրոպական քաղաքական ու տնտեսաիրավական

սկզբունքներին ու կանոններին համապատասխան, այնուամենայնիվ պարզ է, որ այս քաղաքական նախաձեռնությունը Ռուսաստանի՝ տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու, միաժամանակ նոր տնտեսական շուկաներ գրավելու, ֆինանսական ներդրումներ կատարելու լավ հնարավորություն է:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության հնարավոր մասնակցությանն այս նախագծին, ապա պետք է նշել, որ դրան նպաստող հանգամանքները շատ քիչ են: Չնայած Հայաստանի կառավարության դրսևորած հետաքրքրությանը Ռուսաստանի նախաձեռնությամբ վերջին տարիներին ստեղծված տնտեսական համագործակցության և ինտեգրման միությունների նկատմամբ (Մաքսային Միություն, Եվրասիական Տնտեսական Միություն)[1] այնուամենայնիվ ընդհանուր սահմանի բացակայությունը, հարևան երկրների անշահագրգռվածությունը նմանատիպ համագործակցությամբ, ստիպում են մեր պետությանը բավարարվել միայն պասիվ դիտորդի կարգավիճակով:

Բացի այդ, այս կառույցին Հայաստանի հնարավոր անդամակցությունը միանշանակ չի ընդունվում քաղաքական ու հասարակական շրջանակներում: Քաղաքական վերլուծաբանները հիմնականում գտնում են, որ նման համագործակցությունը անհպատակահարմար է, քանի որ տնտեսապես դեռևս թույլ զարգացած այդ միությունը ոչինչ չի կարող տալ մեր երկրին:

Այսպիսով, պետք է նշել, որ տարածաշրջանային արդի քաղաքատնտեսական իրադրության պայմաններում եվրոպական կառույցներին ինտեգրումը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման ամենահավանական ու միակ տարբերակը:

---

[1] "Գործընկերության և համագործակցության" համաձայնագիրը 1999 թվականից մինչև ԵՀՔ -ի հաստատումը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական հանձնաժողովի միջև հարաբերությունները կանոնակարգող հիմնական փաստաթուղթ էր, որը կողմերին հնարավորություն էր ընձեռում ավելի սերտ համագործակցություն զարգացնել քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում՝ հիմնական նպատակ հետապնդելով Հայաստանին աջակցություն ցուցաբերել շուկայական տնտեսության անցումային փուլն արագ հաղթահարելու համար: - Տես. Գ. Մ. Քեռյան, Հ.Ս. Սիմոնյան Հայաստան-Եվրոպական Միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2005թ., - էջ 8:

[2] Տես. Եվրոպական հարևանության քաղաքականություն (Եվրոպական Միություն – համառոտ ակնարկ և փաստաթղթերի ժողովածու). – Եր., Անտարես, 2006. – էջ 232-277:

[3] Տես. Նշվ. ժողովածու – էջ 232-277: